Մրցութային պայմաններ

- ✓ Մրցույթին կարող են մասնակցել ֆիզիկական կամ իրավաբանական անձինք:
- ✓ Մրցույթի մասնակիցը մրցույթի հայտարարման օրից սկսած՝ 120-օրյա ժամկետում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն առձեռն ներկայացնում է մրցույթի մասնակցության հայտ-փաթեթը, որը ներառում է՝
  ա/ երաժշտական ստեղծագործության հեղինակի կենսագրությունը և պորտֆոլիոն (գրված երաժշտական ստեղծագործությունների ցանկ, առկայության դեպքում՝ ձայնագրություններ, տեսագրություններ, համացանցային հղումներ և այլն),
  բ/ մասնակցի անվանումը (անունը), հեռախոսահամարը, Էլ.փոստի հասցեն, վավերապայմանները,
  գ/ երաժշտական ստեղծագործության պարտիտուրը (էլեկտրոնային նոտայագրմամբ),
  դ/ երաժշտական ստեղծագործության ձայնագրությունը (առկայության դեպքում),
  ե/ ստեղծագործության նկարագրությունը՝ ազատ ոճով (բովանդակություն, երաժշտական ձևի վերլուծություն և այլն),
  զ/ ոլորտի մասնագետների կողմից տրված բնութագիրը՝ հեղինակի, ինչպես նաև երաժշտական ստեղծագործության վերաբերյալ (առկայության դեպքում):
- ✓ Մրցույթին ներկայացված երաժշտական ստեղծագործությունը նախկինում չպետք է կատարված կամ այլ մրցույթին ներկայացված լինի:
- ✓ Երաժշտական ստեղծագործությունը պետք է լինի առնվազն 30 րոպե տևողությամբ՝ նվազագույնը՝ սիմֆոնիկ նվագախմբի և երգչախմբի համար:
- ✓ Մրցույթի մասնակիցը (երաժշտական ստեղծագործության հեղինակը) չի կարող ներկայացնել մեկից ավելի հայտ:
- ✓ Սույն հայտարարությամբ սահմանված պահանջներին չհամապատասխանող հայտերը մերժվում են, որի մասին հայտատուին տրվում է ծանուցում՝ հայտը ներկայացնելուց հետո, 7-օրյա ժամկետում:
- ✓ Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է՝ ոչ ուշ քան Մրցույթի հրապարակային ծանուցումից 120 օրացուցային օր հետո, ժամը՝ 17:00-ն:
- ✓ Մասնակիցը մինչ հայտը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտն իրավունք ունի փոխելու կամ հետ վերցնելու իր հայտը:
- ✓ Մրցույթի հաղթողին որոշում է մրցութային հանձնաժողովը:
- ✓ Մրցութային հանձնաժողովը կարող է ներկայացված որևէ հայտ հաղթող չճանաչել:
- ✓ Մրցույթի հաղթողի հետ կնքվում է դրամաշնորհի հատկացման պայմանագիր՝ 4 (չորս) միլիոն ՀՀ դրամի չափով (ներառյալ օրենսդրությամբ նախատեսված հարկերն ու տուրքերը):
- ✓ Մրցույթը կարող է չեղարկվել, եթե պարզվի, որ ներկայացված բոլոր հայտերը չեն համապատասխանում սույն կանոնակարգով հաստատված մասնակցության պայմաններին: